


561  
F - 95

1920



24

ԵՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ՊՈՒԼԿԱՐԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

---

ՄՇԱԿԻԱԾ ԵՒ Վ. Ա. ԽԵՐԱՅԻԱԾ ՆՈՅՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
Բ. ՀԱ. ՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԿՈՂՄԵ

---

Ս Օ Ֆ Ի Ս.

ՏՊԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՐԹԻ

1920

361  
F-95

№ 1920

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ՊՈՒՆԿԱՐԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱ



Մշակում էի Վ. Ա. ԽԵՐԱՅԻԱՆ ՆԼՅՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
Բ. Հ. Մ. Մ. ԳՈՒՄԱՐԻՆ ԿՈՂՄԵ



Ս Օ Ֆ Ի Ա.

ՏՊԱՐԱՆ „Հ Ա Յ Ա Ս Ա Ն“ ԹԵՐԹԻ

1920

ՀՀ-ՊՕԾՏ

# ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՌԻԹԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Համեմապահան պատերազմը, ինչպէս ամեն աել,  
առաւել եւս մեծ չափերով իր աւերները գործեց թուր-  
քիոյ տարբարու տիրապետութեան տակ հեծող թշուառ  
հայութեան վրայ:

Զինագաղաքէն յետոյ Պուլկարահայութիւնը աւելի  
մօտէն իրազեկ եղած ստեղծւած կացութեան, մանա-  
ւանդ Հայաստանի մէջ, ուր հայութեան մէկ կարեւոր  
մասը արդէն սրէ անցած, իսկ մեծ մաս մըն ալ տա-  
րագրութեան միջոցին սպաննւած էր եւ կամ ստեղծւած  
գժոխային պայմաններու տակ անհետացած: Տարագըր-  
եալներէն խոշոր մաս մըն ալ հազիւ պահած իր գո-  
յութիւնը աններեւակայելի դժւարութիւններով՝ պէտք  
ունէր վերադառնալու իր հայրենիքը եւ կամ ծննդա-  
վայրը, հետեւաբար եւ անմիջապէս կը կարօտէր նիւ-  
թական եւ բարոյական մեծ օգնութեան: Այս օգնու-  
թիւնը անիկա ամենայն իրաւամբ կ'ակնկալէր արտա-  
սահմանի իր եղբայրներէն:

Պուլկարիոյ հայութիւնը՝ խորապէս գիտակից իր  
սլարտականութեանց՝ անհրաժեշտ նկատեց կազմակերպ-  
ութիւն Պուլկարահայ բոլոր գաղութներուն մէջ՝ Ա.ԶԴԱԾԻՆ  
Միթիթիին անւան տակ եւ ստեղծել կենդանի շարժում  
մը զօհողութիւններու առաւելագոյն չափը ձեռք ձգե-  
լու համար:

Աւ այսպէս Պուլկարահայ գաղութներուն մէջ գո-  
յութիւն առին ազգային մարմինները 1918ի վերջերը  
եւ գումարեցաւ առաջին նշանակովի Պուլկարահայ  
Պատգամաւորական ժողովը:

Ա. Համագումարին մէջ ծեծւած հարցերը կը դա-  
ստորւին այսպէս:

1) Կազմակերպել Պուլկարահայութիւնը ներքին  
տեսակէտով.

2) Կարելի եղած բոլոր միջոցներով օժանդակել  
հայկ. վերածնունդին:



21904-59

Պուլկարահայ զանազան գաղութները կազմակերպւելով Սօֆիայի կեդր. Վարչութեան շրջաբերականին հիման վրայ, աւելի քան տարւան մը գործունէութենէ վերջ, անկարելի ըլլալով պուլկարահայերուն հայրենիք վերադառնալ, տիրող պայմաններուն պատճառաւ, պէտք զգացին երկրորդ համագումարի մը, որ տեղի ունեցաւ Սօֆիա, 1920 փետր. 19էն մինչեւ մարտ 11, համաձայն կեդր. Վարչութեան թիւ 421 շրջաբերականին:

Նկատելով որ Պուլկարահայ Ազգ. Միութեան Ա. համագումարը մշակած չէր որոշ ծրագիր-կանոնադիր մը, որով ճշգւած ըլլալին թէ՛ Միութեան գործունէութեան նպատակը ու միջոցները եւ թէ՛ կեդր. Վարչութեան ու իր մասնաճիւղեիուն փոխ-յարաբերութիւնները, Պուլկարահայ Բ. Համագումարը մշակեց հետեւեալ ծրագիր-կանոնադիրը:

Գլուխ Բ.

### ՆՊԱԾԱԿ ՊՈԽԵԿԱՐԱՅ.ՀԱՅ Ա.Հ. ՄԻԹԱԹԵԱՆ

1.—Պուլկարահայ Ազգ. Միութեան նպատակն է. կազմակերպել ամբողջ պուլկարահայ շրջանները, որպէս զի բոլոր միջոցներով եւ հաւաքական կամքով կարողանան գոհացում տալ հայկական վերածնունդին հետեւեալ պահանջներուն:

Ա.—Օժանդակել հայկական բանակին նիւթական եւ ֆիզիքական միջոցներով:

Բ.—Օժանդակել հայ տարագրեալներուն եւ որբերուն նիւթական եւ պարենաւորման միջոցներով:

Գ.—Կազմակերպել պուլկարահայութեան գէպի հայրենիք ներգաղթը եւ հայթայթել անհրաժեշտ նիւթական միջոցները, հիմնելով յատուկ մնայուն փօնու մը:

Դ.—Բարոյապէս օժանդակել հայկական ընդհանուր դատին արտասահմանի մէջ՝ ուժ տարով Հայկական Հանրապետութեան կողմէ նշանակւած լիազօրներու հետապնդած նպատակներուն:

Գլուխ Գ.

### ՄԻ ԶՈՑՆԵՐ

2.—Պուլկարահայ Ազգ. Միութիւնը իր նպատակներուն հասնելու համար կը նախատեսէ երեք տեսակի միջոցներ՝

Ա.—Նիւթական միջոցներ,

Բ.—Ֆիզիքական միջոցներ,

Գ.—Բարոյական միջոցներ:

### Ա) ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻ ԶՈՑՆԵՐ

3.—Նիւթական միջոցները հետեւեալներն են՝

ա) Հայրենիքի տուրք.

բ) Հասոյթներ անցադիրներէ.

գ) Հասոյթներ ներկայացումներէ, հանդէմներէ, վիճակախաղերէ, աճուրգներէ, կամաւոր նւիրատուութիւններէ ինչպէս նաև բոլոր բացառիկ եւ շինախառնուած հանգանակութիւններէ:

դ) Հասոյթներ Արբախամէն, կ. Խաչէն եւ ուրիշ օժանդակ բարեգործական միութիւններէ:

ՀԱՅԻԵՆԵՐԻ ՏՈՒՐՔԻ

4.—Կը հասուատուի հայրենիքի առւրք մը առաջատական գրութեամբ, պարտադրիչ իւրաքանչիւրին համար:

5.—Տուրքը պարտաւորիչ է բոլոր անոնց համար այլ կամ կին-որմնց ամսական նւազագույն հասոյթը ներկայ պայմաններուն մէջ՝ 500 լիվայի գումարէն վեր է:

6.—Այս գումարէն վար տուրքը կրկին պարտաւորիչ է, սակայն քանակը շի որոշւիր բատ կամ է:

7.—Առաջատական տուրքի աղիւսակը հետեւեալն է՝ ամսական հասոյթը ինկատի ունենալով՝

լէվա	500—	1000	պիտի	տրէի	1	0/0
"	1001—	1500	"	"	1 1/2	0/0
"	1501—	2500	"	"	2	0/0
"	2501—	4000	"	"	2 1/2	0/0
"	4001—	6000	"	"	3	0/0
"	6001—10000	"	"	"	3 1/2	0/0
"	10000էն վեր	"	"	"	4	0/0

8.—Իւրաքանչիւր գաղութի մէջ Տեղակ, Մարմիններու հրաւէրով եւ հակողութեան տակ կը կազմէի մասնաւոր Գնահատիչ Յանձնախումբ մը, բաղկացած գլխաւոր արհեստներու, պաշտոնեաններու եւ վաճառկաններու ներկայացուցիչներէն, որոնք կը ճշգնդագութիւն խրաքանչիւր հայ անհատին հայրենիքի տուրքին քանակը վերսկիշեալ աղիւսակին համաձայն:

9.— Գնահատիչ Յանձնախումբը կը կազմէ ի Յանձնախումբի Յանձնամերէ՝ Նկատի ունենալով գաղութին բնակչ. թիւը:

10.— Գնահատիչ Յանձնախումբին որոշումներուն դէմ բողոքողները կը նան ներկայացնել իրենց բողոքողները Տեղական Մարմիններուն՝ վճիռը ստանալէն յետոյ մինչեւ 15 օր, որմէ վերջ վճիռը կ'ունենայ պարտադրիչ ոյժ:

11.— Հայրենիքի տուրքը վճարելի է ամսավճարներով:

### ՊԱՏՃԱԿԱՆ ՏՐԱՄՍԴՐՈՒԹՅԻՆՆԵՐ

12.— Անոնք որ կը մերժեն առանց արդարացի պատճառներու վճարել հայրենիքի տուրքը, կ'ենթարկւին հետեւեալ պատիժներուն.

ա) կը զրկւին ընարելու եւ ընտրւելու իրաւունքն.

բ) կը զրկւին անցագիր ստանալու իրաւունքն.

շ) կը զրկւին պասկէ, ինչպէս նաեւ թաղման եւ հոդեհանգատի արարողութեանց հանդիսաւորութիւններէ.

դ) Այդպիսիներուն դէմ պօյքօթ կը հրատարակւի ազգային շրջանակներու մէջ.

ե) կը զրկւին հայկական պաշտօնական մարմիններու ամեն տեսակի աջակցութիւններէն:

13.— Վերոյիշեալ պատիժները կը տրւին Ազգային Միութեան Տեղ. Մարմիններու կրղմէ՝ գիտութեամբ Հոգեւոր իշխանութեանց եւ թաղկ. Խորհուրդներու:

Բ. ՀԱՄՈՅԹՆԵՐ ԱՆՑԱԳԻԵՐ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ, ԵՒՆ.

14.— Իւրաքանչիւր հայ որ հարկադրւած է անցագիր ստանալ, պարաւոր է վճարել տուրք մը հաւասար իր վճարած մէկ ամսական հայրենիքի տուրքի քանակին:

15.— Անցագրի տուրքը կամաւոր է բոլոր անոնց համար, որոնք պատահարար Պուլկարիային կ'անցնին:

16.— Անցագրի տուրքէն ազատ են բոլոր անոնք, որոնք անկարող են ճանչցւած որոշ սակով մը տուրք վճարելու:

17.— Կեդր. Վարչութիւնը իր ստացած տեղեկութեանց համաձայն եւ նպատակայարմար սահիթներով կը հրահանգէ իր մասնաճիւղերուն, ձեռնարկել հագուստեղէնի, ուտեսանեղէնի եւայլն կենսական պիտոյքներու հաւաքման:

### Բ) ՖԻԶԻՐԲԱԿԱՆ ՄԻԶՈՅՆԵՐ

18.— Կեդր. Վարչութիւնը Տեղական Մարմիններու միջոցաւ կը կազմէ ընդհանուր ցուցակը բոլոր այն Պուլկարահայերուն, որոնք կը փափաքին ծառայել Հայկական բանակին մէջ՝ զանազան պաշտօններով եւ մասնագիտութիւններով եւ այս մասին բանակցութեան կը մտնէ Հայկական համբապետութեան հետ՝ անոր ներկայացուցչին՝ միջոցաւ, կարգադրելու համար պուլկարահայ կամաւորական գունդին տեղակիսումը դէպի Հայոստան:

19.— Կամաւորական գունդի կազմաւորման եւ տեղակիսման համար կեդր. Վարչութիւնը կը գիրմէ պէտք եղած միջոցներուն, ստանալու համար Պուլկար եւ օտար իշխանութեանց թոյլաւութիւնը:

20.— Իւրաքանչիւր շրջանի Տեղական Մարմինը ըստ տեղական պայմաններուն նախաձեռնարկ կը լլայ մարմինարքութեան եւ զինավարժական ընկերութիւններու կազմութեան՝ առաջնորդութեամբ եւ ղեկավարութեամբ պատճետի սպաններու եւ զինուորներու:

### Գ) ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ՄԻԶՈՅՆԵՐ

21.— Պուլկ. հայ Ազգ. Միութեան Տեղկ. Մարմինները կը կազմակերպեն յաճախ հրապարակային գասախօսութիւններ, միթինկներ, հանգէններ եւ այլ պաշտօնական համազգային ցոյցեր, վառ պահելու համար հայկական անկախ կեանքի եւ քաղաքացիական ինքնաճանչման զգացումները:

22.— Ազգ. Մարմինները ամեն կարելի միջոցներով մղում կուտամն հայ մտաւորական հաստատութեանց, ազգ. վարժարաններու, կազմակերպելով նաեւ դիշերային գասախօսութիւններ:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

### ԿԵԴՐ. ՎԱՐՉՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

23.— Կեդր. Վարչութիւնը Պուլկ. հայ Ազգ. Միութեան բարձրագոյն վարիչ մարմինն է, որ լիազօր է գործադրելու Պատգմ. Ժողովի բոլոր որոշումները այս ծրագիր-կանոնագրին գծած սահմաններուն մէջ, ղեկավարելով Տեղկ. Մարմիններու դործունէութիւնը եւ հսկելով անոնց վրայ:

24.— Պուլկարահայ Աղդ, Միութեան Կեդր. Վարչութիւնը կ'ընարւի Պուլկարահայ Աղդ, Միութեան Պատգմ. Ժողովին կողմէ միամեայ շրջանի համար.

25.— Կեդր. Վարչութիւնը կը բաղկահայ ինը (9) անդամներէ եւ չորս փոխ-անդամներէ:

26.— Կեդր. Վարչութեան անդամ կրնան ընտրուիլ իրենց ազգային պարտականութիւնը լիովին կատարած երկառ ազգայիններ, ըլլան անոնք Պատգմ. Ժողովի անդամ կամ ոչ:

27.— Կեդր. Վարչութեան անդամ կրնան ընտրուիլ միայն անոնք, որոնք լրացուցած են 25 արիքը եւ աւարտած միջնակարգ վարժարանի մը գասընթացքը: Նման կրթութիւն չունեցողները ընտրելու համար պէտք է առնւազն 30 տարեկան ըլլան:

28.— Կեդր. Վարչութիւնը կ'ընարւի համեմատական ձեւով Պատգմ. Ժողովի մէջ ներկայ եղող հսանքներէն:

29.— Կեդր. Վարչութիւնը պատասխանատու եւ համարատու է միայն Պուլկ. Պատգմ. Ժողովին առջեւ:

30.— Կեդր. Վարչութիւնը Պատգմ. Ժողովին մէջ չնախատեսած կարեւոր եւ կենսական խնդիրներու առթիւ կը կազմէ արտակարգ խորհրդակց. ժողովներ Պուլկարահայ չորս մեծ շրջաններու (Ֆիլիպէ, Վառնա, Բռուձուք, Սօֆիա) Տեղկ. Մարմիններու կողմէ ընտրած մէկ-մէկ ներկայացուցիչներով, որոնք կ'ունենան միայն խորհրդական ձայնի իրաւունք:

31.— Կեդր. Վարչ. պարտականութիւններն են՝

Ա) Գործադրել Պատգմ. Ժողովին որոշումները.

Բ) Հոկել Տեղ. Մարմիններու գործունէութեան վրայ եւ անոնց ուղղութիւն տալ.

Գ) Քննել եւ ընթացք տալ Տեղկ. Մարմիններու կողմէ եղած առաջարկներուն.

Դ) Ինկատի առնել եւ պատասխանել, առ առաւելն մինչեւ մէկ շաբաթ, Տեղկ. Մարմիններու կողմէ առացւած թղթակցութեանց.

Ե) Անհրաժեշտ գիմումներ կատարել Պուլկարական եւ Համաձայնական իշխանութեանց մօա.

Զ) Կազմել ընդհանուր Պուլկարահայութեան մարդաբարբէ.

Է) Հարկ եղած պարագային մասնաւոր պատի-

րակներու միջոցաւ քննութիւն կատարել շրջաններուն մէջ.

Ը) Վարչութիւնը կամ ըեկանել շրջանի Տեղակ. Մարմիններու բնտրութիւնները.

Թ) Կեդր. Վարչութիւնը իր քով հաւաքւած դրամները կը յանձնէ ապահով դրամատուն մը Ատենապետի, Ատենապետի իր գործունէութեան տեղեկագրութիւնը եւ հաշւեկշիռը գրաւոր կերպով ներկայացնել շրջաններուն.

Ժ) Շաբաթը մէկ անդամ նիստ գումարել, պահել կանոնաւոր ատենապրութիւն եւ հաշւակալութիւն,

ԺԱ) Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է վեց ամիսը անդամ մը իր գործունէութեան տեղեկագրութիւնը եւ հաշւեկշիռը գրաւոր կերպով ներկայացնել շրջաններուն.

ԺԲ) Տեղական Մարմիններէն երեք ամիսը անդամ մը պահանջել ընդհ. եւ ամփոփ անդեկագրութիւն մը.

ԺԳ) Կեդր. Վարչութիւնը մասնաւոր կերպով կը հսկէ դրամական բոլոր բարենպատակ առաջարկութիւններէն նաև ներդադիմին, մինչեւ որ այդ առաջարկութիւնը եւ ներդադիմները իրենց որոշած տեղերը հասնին:

ԺԴ) Կեդր. Վարչութիւնը կը վաւերացնէ ընտրած Տեղկ. Մարմինները, բնտրութեան արդիւնքը իրեն տեղեկացրելէն մինչեւ 15 օր.

ԺԵ) Երբ Կեդր. Վարչութիւնը իր մեծամասնութիւնը կործնցնէ (հաշւելով նաև փոխ-անդամները), մասցաւ անդամները կը հրատիրեն արտակարգ Պատգմ.

ԺՒ) 32.— Կեդր. Վարչութեան փոխ-անդամ կ'ընտրւին չորս (4) հոգի: Կեդր. Վարչութեան հրաժարեալ անդամին տեղ կ'առնելի փոխանդամներէն ա՛յն՝ որ կը պատկանի հրաժարեալ անդամին քաղաքական հոսանքին:

### Գ լ Ո Ւ Ե.

Կեդր. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻԽԱՆ

33.— Կեդր. Վարչութեան դիխանը կ'ըլլայ ընտրավի եւ կը բազկանայ հետեւայներէն.

Ա. եւ Բ. Ատենապետ.

Ա. եւ Բ. Ատենապետիր.

Գանձապետ:

34.— Կեդր. Վարչութիւնը կունենայ ճրկու վճարովի պաշտօնեայ, ինչպէս նաեւ բարապան մը:

35.— Կեդր. Վարչութիւնը կունենայ իր տարեկան պիտծէն, հաստատած եւ վաւերացւած Պատգ. Փողովէն:

36.— Պուլկարահայ Աղդ. Միութեան Կեդր. Վարչութիւնը ըլլալով միեւնոյն ատեն կեդր. Վարչութիւնը Որբախամբ եւ ուրիշ բարեգործական ընկերութեանց, իր այդ, պարտաւոր է լիովին կասարել Պատգմ. Փողովին այդ մասին տւած որոշումները:

Գ Լ Ո Ւ Ց Զ.

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ Ա.ՋԳ. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՂԿ. ՄԱՐՄԻՆԵՐԸ

37.— Պուլկարահայ Աղդ. Միութեան Տեղկ. Մարմիները կ'ընտրւին իւրաքանչիւր շրջանի երկառ ընտրութեալ կողմէ եւ կը բաղկանան 3, 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Իւրաքանչիւր Տեղկ. Մարմին կը ներկայացնէ իր շրջանը եւ կը կազմէ մասնաճիւղը Աղդային Միութեան Կեդր. Վարչութեան:

38.— Տեղական Մարմին կրնայ ունենալ իւրաքանչիւր Պուլկարահայ շրջան, Այն շրջանները, որոնց բնակչութեան սահմանափակ թիւր չի ներել առանձին Տեղական Մարմին մը կազմել, կը կապւին իրենց մտակայ շրջանի Տեղկ. Մարմիններուն: Այս վերջինները պարտաւոր են ճանչնալ զանոնք իրենց շրջանին մէկ մասնիկը:

39.— Տեղկ. Մարմին անդամները կրնան ըլլալ երկառ եւ կ'ընտրւին շրջանին կողմէ գաղտնի, ուղղակի, հաւասար եւ համեմատական ձեւով՝ համաձայն սոյն կանոնագրի ընտրական տրամադրութեանց:

40.— Տեղական Մարմիններու գիւտնը կը կազմւի ըստ ընդունած սովորութիւններու:

41.— Հայաշատ կեդրուներու Տեղկ. Մարմինները կարող են ունենալ իրենց վճարովի պաշտօնեանները, եթէ անհրաժեշտ համարէ:

42.— Տեղական Մարմինները պարտաւոր են գործադրել թէ՛ Պատգմ. Փողովին բոլոր հրահանգները, զոր իրենց կը հաղորդէ կեդր. Վարչութիւնը եւ թէ՛ այս վերջինին ընթացիկ բոլոր որոշումները:

43.— Տեղական Մարմինները պարտաւոր են շաբաթը անդամ մը նիստ գումարել, կանոնաւոր կեր-

պով հայրենիքի տուրքը դանձել, Կեդր. Վարչութեան կողմէ հրահանգւած հանդանակութիւնները կատարել, Աղդ. Միութեան՝ իրենց շրջանին վերաբերեալ բոլոր գործերուն վրայ հսկել, կանոնաւոր թղթակցութիւն պահել կեդր. Վարչութեան հետ, այս վերջինին ներկայացնել երեք ամիսը անդամ մը ընթացիկ տեղեկատաւութիւնները եւ հաշւեկշու, ինչպէս նաեւ ունենալ իր կանոնաւոր արձանագրութիւնները եւ հաշւակալութիւնը:

44.— Տեղական Մարմինները պարտաւոր են իրենց տեղեկատաւութիւնը եւ հաշւետաւութիւնը ընել նաեւ Կեդր. Վարչութեան կողմէ զրկւած շրջեկին:

45.— Տեղական Մարմինները՝ իրենց օժանդակ բարեգործական մարմիններու միջոցաւ, կ'աշխատին ուժեղացնել Աղդ. Միութեան բարեգործական ֆօնտը, ջանալով, սակայն, որ այս կողմնակի միջոցները ու եւ է կերպով չի մասան հայրենիքի տուրքին կանոնաւոր գանձման:

46.— Տեղական Մարմինները պարտաւոր են գաղութին ընդհանուր զարգացման սաստաբել իրենց յարմար գատած միջոցներով, ինչպէս դասախոսութիւն, բանախօսութիւն եւալին:

47.— Տեղական Մարմինները պարտաւոր են իրենց տարեկան մանրամասն տեղեկատաւութիւնը եւ հաշւեկշու ներկայացնել կեդր. Վարչութեան, Պատգմ. Փողովին գումարումէն առնւազն ամիս մը առաջ:

48.— Տեղական Մարմինները պարտաւոր են ղլկել անյապաղ կեդր. Վարչութեան պահանջած վիճակագրութիւնները եւ մարդահամարի ցուցակները:

49.— Իրենց կարգին Տեղական Մարմինները իրաւունք ունին օգտակար եւ նպատակայարմար առաջարկներ բերել կեդր. Վարչութեան, զորս այս վերջինը պարտաւոր է ի նկատի առնել:

50.— Տեղական Մարմինները պարտաւոր են (3) երեք ամիսը անդամ մը իրենց պատկանած շրջանին առջեւ հրապարակային ժողովի մը մէջ իրենց բերանացի տեղեկատաւութիւնը եւ հաշւետաւութիւնը ընել:

51.— Տեղական Մարմիններու նիստերը կը լլան գոնբաց:

52.— Կեդր. Վարչութեան զատ Տեղկ. Մարմիններն աւ իրաւունք ունին ճամբորդութեան համար պահան-

ջւած ինքնութեան վկայականներ տալ իրենց պատկանած շրջանին մէջ:

53.— Տեղական Մարմինները պարտաւոր են (15) տասնեւհինգ օրւայ միջոցի մը մէջ պատասխանել իրենց դրկւած բոլոր պաշտօնական նամակներուն եւ գրութիւններուն:

54.— Տեղական Մարմինները կը պաշտօնավարեն մէկ տարի Երբ Տեղի. Մարմինը կորսնցնէ իր օրինական մեծամասնութիւնը, մնացած անդամները կը հազորդեն անմիջապէս այս պարագան կեղը. Վարչութեան, ստանալու համար անկէ նոր Մարմնի մը ընտրութեան հրահանդը:

### Գ Լ Ո Ւ Խ Ե.

#### ՊԱՏԳԱՄԱԿԱՊՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ.

55.— Պուլկարահայ Ազգ. Միութեան Պատգմ. Ժողովը կը գումարեի տարին մէկ անգամ Սօֆիա, մարտ ամսին մէջ, կեղը. Վարչութեան մասնաւոր շրջաբերականով:

56.— Պատգմ. Ժողովը Ազգ. Միութեան գերագոյն օրէնսդիր Մարմինն է, որուն որոշումները պարտաւոր են գործադրել կեղը. Վարչութիւնը եւ շրջաններուն Տեղական Մարմինները:

57.— Պատգմ. Ժողովը կ'զբաղի կեղը. Վարչութեան կողմէ մշակւած օրակարգով, ինչպէս նաև պատգամաւորներու կողմէ առաջարկւած ինդիրներով, եթէ  $\frac{2}{3}$ -ի մեծամասնութիւնը համաձայն է անոնց օրակարգի նիւթ կազմելուն:

58.— Պատգամաւոր կարող է ըլլալ լուրաքանչիւր հայ՝ այր կամ կին՝ որ աւարտած է (25) քաննեւհինգ տարիքը եւ վճարած հայրենիքի տուրքը:

59.— Պատգմ. Ժողովին դիւանը կը կազմեն նոյն ժողովին գաղտնի քէտարկութեամբ ընտրւած երեք տանապետներ եւ հինգ ատենադպիրներ, որոնք կը պաշտօնավարեն հերթով:

60.— Պատգմ. Ժողովի դիւանը պարտաւոր է պահել նիստերու կանոնաւոր ատենադպութիւնը, որուն համար նա պատասխանաւոր է ժողովին:

61.— Պատգմ. Ժողովը կը լսէ եւ կը քննէ կեղը.

Վարչութեան տեղեկագիրը եւ հաշուեկիռը ու կը վաւրացնէ զանոնք:

62.— Պատգմ. Ժողովը կը գծէ Ազգ. Միութեան համար ընդհանութիւնը ուղղութիւն, կը քւէարկէ օրէնքներ, կը բարեփոխէ եղանակները կամ կը չնջէ աւելորդ նկատածները եւ կը քւէարկէ կեղը. Վարչութեան տարեկան պիտուծէն:

63.— Արտակարգ Պատգմ. Ժողով կարելի է գումարել կեղը. Վարչութեան հրաւերով, բացառիկ եւ խիստ կենսական խնդիրներու առթիւ, կամ շրջանի մարմիններուն պահանջին վրայ՝ եթէ այդ մարմիններուն պատկանած գաղութները կը ներկայացնեն պուլկարահայութեան կէսէն աւելին, բայց այս պարագային պատասխանաւութիւնը կ'իյնայ պահանջող շըրջաններու մարմիններուն վրայ:

64.— Շրջաններու կողմէ պահանջւած Պատգմ. Ժողովը գումարելու համար պահանջող Տեղի. Մարմինները պարտաւոր են նախապէս տեղեկացնել կեղը. Վարչութեան անոր օրակարգի խնդիրները:

65.— Պատգամաւորներու ծախսերը կը ճշգրին կեղրոնական Վարչութեանէն եւ կը վճարին Ազգ. Միութեան ընդհանութիւն:

66.— Պատգմ. Ժողովի նիստերը կը բացւին շըրջաբերականին մէջ որոշւած թւականին, եթէ պատգամաւորներու  $\frac{2}{3}$ -ը ներկայ է, հակառակ պարագային երեք օր սպասելէ վերջ, Պատգմ. Ժողովը կը բացւի բոլոր ընտրւած պատգամաւորներու թիւին բացարձակ միհամանութեան ներկայութեան:

67.— Պատգմ. Ժողովին գումարումէն երեք ամիս առաջ իւրաքանչիւր Մարմին կը հաղորդէ կեղը. Վարչութեան իր շրջանի հայ բնակչութեան ճշգրիտ թիւը, որուն հիման վրայ՝ կեղը. Վարչութիւնը երկողմէ կը ճշգէ պատգամաւորներու քանակը, տալով (1000) հազար հոգիին մէկ պատգամաւոր: Եթէ շրջաններու  $\frac{1}{4}$ -էն աւելին թերանայ այս պարտականութեան մէջ, կեղը. Վարչութիւնը կ'ընդունի 25ը իրը պուլկարահայ պատգամաւորներու ամբողջական թիւը:

ԳԼՈՒԽ Բ.

ԸՆՏՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

68.— 21 տարիքը աւարտած եւ հայրենիքի տուրքը վճարած իւրաքանչիւր հայ անհատ, այս կամ կին, որ կը բնակի Պուլկարփոյ եւ Թրակիոյ սահմաններուն մէջ, առնւազն (3) երեք ամիսէ ի վեր, իրաւունք ունի ընտրելու եւ ընտրելու իր պատկանած շրջանին մէջ։

69.— Ընտրելու եւ ընտրելու իրաւունքն կը զրկին բոլոր անոնք, որ առանց արդարացուցիչ պատճառներու (3) երեք ամիս յաջորդաբար չեն վճարած հայրենիքի տուրքը։

70.— Պատգամաւորներու ընտրութեան քւէարկոթիւնը կը կատարւի իւրաքանչիւր Տեղական Մարմին ունեցող շրջանին մէջ։

71.— Ամեն հայ անհատ, որ ընտրելու իրաւունք ունի, կ'ստանայ իր պատկանած շրջանին Տեղի. Մարմինէն կեդր. Վարչութեան կողմէ պատրաստած ընտրական տոմս մը, առանց որուն ոչ ոք կրնայ քւէարկել։

72.— Ընտրական տոմս կարելի է ստանալ նոյն իսկ ընտրութեան օրը։

73.— Պատգամաւորական ընտրութիւններուն համար պուլկարահայ ամբողջ գաղութը կը կազմէ մէկ ընտրականշրջան։ Քւէները կը կեդրունանան Տեղական Մարմին ունեցող իւրաքանչիւր շրջանի Ընտրական Յանձնախումբին մօտ, ուրկէ ընտրութեան տեղեկագիրը կը զրկի կեդր. Վարչութեան քով, ներկայ կանոնադրին 80-րդ յօդածին համաձայն կազմւած կեդր. Ըստողական Յանձնախումբին։

74.— Այն հոսանքները, որոնք կուզեն մասնակցիւ ընտրութեանց խնդրագրով մը կը ներկայացնեն կեդր. Վարչութեան իրենց թեկնածուներու ցուցակը ընտրութեան թւականէն առնւազն ամիս մը առաջ Խնդրագրերը պէտք է ստորագրւած ըլլան միեւնոյն հոսանքին պատկանող առնւազն հինգ ընտրողներէ։

75.— Ընտրութիւնները կըլլան ընդհանուր, (երկանք) գաղտնի, հաւասար, ուղղակի եւ համեմատական։ Կատարւած բոլոր քւէարկութեանց արդիւնքը կեդր. Վարչութեան քով կազմւած ընտրողական յանձնախումբին համաելէ յետոյ, այս վերջինը կը ճշգէ նախ ամբողջ

շրջանի քւէարկողներու ընդհանուր յետ յետոյ իւրաքանչիւր ցուցակին ստացած քւէներուն թիւրը Պուլկուներու ընդհանուր թիւր բաժնելով պատգամաւորներու թիւրով, կը գտնէ ընտրւելիք իւրաքանչիւր պատգամաւորի համար անհրաժեշտ եղող քւէներու քանակը, այս թիւրով բաժնելով իւրաքանչիւր ցուցակին ստացած քւէներու թիւր ըստ համեմատականի՝ կը գտնէ իւրաքանչիւր ցուցակին տալիք պատգամաւորներու քանակը։

76.— Տեղական Մարմիններու ընտրութիւնը կըլլայ միեւնոյն սիատէմով, ոա՛ տարբերութեամբ որ ընտրութիւնը կըլլայ միայն շրջանին մէջ, տեղական Ընտրողական Յանձնախումբին առջեւ։

77.— Պուլկարական ընտրական օրէնքին արամագրութիւնները գործադրելի են Ազգ. Միութեան ընտրութեանց մէջ այնքանով՝ որքանով որ չեն հակասեր ներկայ կանոնադրին։

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

78. Ընտրողական յանձնախումբեր կը կազմւին Տեղական Մարմին ունեցող բոլոր շրջաններուն մէջ։

79.— Շրջանային Ընտրողական Յանձնախումբերը կը կազմւին հետեւեալ կերպով՝

ա) Տեղի. Մարմին մէկ անդամը իբր նախագահ,  
բ) նոյն Մարմին կողմէ նշանակւած երկու ընտրողներէ, որոնցմէ մին ազգ. վարչարան ունեցող վայրերու մէջ պիտի ըլլայ ուսուցչական կազմէն։

ծԱՆՈԹ. — Ընտրողական Յանձնախումբի գործողութեանց կը նան ներկայ զանւելի ընտրութեան մասնակցող իւրաքանչիւր հոսանքը մէկմէկ ներկայացնեցիւ։

80.— Կեդր. Ընտրողական Յանձնախումբը կը բաղկանայ (5) հինգ անձերէ հետեւեալ կերպով։

ա) Կեդր. Վարչութեան կազմէն մէկ անդամ իբր նախագահ,

բ) Կեդր. Վարչութեան գանւած շրջանի Տեղական Մարմին կազմէն մէկ անդամ,

գ) Երեք ընտրողներ վիճակով քաշւած նոյն Տեղի. Մարմին կողմէ, շրջանին ընտրողներու ցանկէն զատւած

եւ որոշ զարգացում ունեցող անձերու ցուցակէ մը,

դ) Կեդր. Ընտրողական Յանձնախումբին գործու

զութեանց պէտք է ներկայ դանեին ընտրութեանց մասնակցող հոսանքներէն մէկ-մէկ ներկայացուցիչ:

Գլուխ թ.

ԵԼԵԿՄԱՆԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

81.— Բոլոր շրջաններու մէջ հայրենիքի տուրքէն եւ ուրիշ բոլոր հասոյթներէն հաւաքւած գրամմները կը դրկւին անյապազ կեդր. Վարչութեան Խակ զգեստեցնները եւ ուշեստեղէնները կը մնան Տեղական Մարմիններուն մօտ՝ կեդր. Վարչութեան արամագրութեան եւ տնօրինութեան տակ:

82.— Կեդրոնական Վարչութեան քով կեդրոնացած հայրենիքի տուրքին զուտ հասոյթէն 10 % կը պահէի իբր պահեստի ֆօնու: Մնացած գումարը իւրաքանչիւր տարի Պատգմ. Ժողովին կողմէ նախապէս գծւած սակերու համաձայն՝ կը բաշխւի նոյն ժողովէն ճշգրտած նապատակներուն:

83.— Այն մարմինները, որոնք իրենց գումարները կեդր. Վարչութեան մօտ փոխադրելէ յետոյ պէտք ունենան դրամի, չի նախատեսւած ու եւ է անհրաժեշտ պէտքի համար, կը պահանջեն եւ կ'ստանան հարկ եղած գումարը կեդր. Վարչութենէն:

84.— Որբախնամի եւ ուրիշ բարեգործական հասաւատութեանց հասոյթները նմանապէս Տեղական Մարմիններու միջոցաւ կը դրկւին կեդր. Վարչութեան:

85.— Պահեստի ֆօնուը կեդր. Վարչութեան կողմէ կը յատկացւի Պատգմ. Ժողովին գծած նապատակներէն մէկին կամ միւսին, պարագային համեմատ, անյետաձելի անհրաժեշտութիւն ունեցող եւ կամ չի նախատեսւած ընդհանուր ազգային պահանջներու:

86.— Կեդր. Վարչութիւնը եւ Տեղական Մարմինները պարտաւոր են վաւերական ընկալագիր ունենալ (5) հինգ լէվայէն բարձր ստացւած կամ վճարւած բոլոր գումարներուն համար:

87.— Տեղական Մարմիններու պիտուծէները կը ճշգրւին իրենց կողմէ եւ կ'ենթարկւին կեդր. Վարչութեան հաւանութեան ու վաւերացման, որմէ յետոյ միայն գործադրելի են:

Գլուխ թ.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՄՆԱՐԿԻՆԵՐ

88.— Որբախնամը եւ Կարմիր-Խաչը կունենան իրենց անդամներուն կողմէ ընտրած մարմիններ իւրաքանչիւր քաղաքի մէջ եւ կը գործեն Ազգ. Միութեան Տեղական Մարմիններու հովանաւորութեան եւ հակողութեան տակ: Անոնք կը նկատին Ազգ. Միութեան Տեղական Մարմիններուն օժանդակ մարմիններ եւ իրենց նիւթական բոլոր հասոյթները կը յանձնեն Ազգ. Միութեան Տեղական Մարմինը որ կ'ուղարկէ զանոնք անյապազ կեդր. Վարչութեան:

88.— Նախորդ յօդւածին մէջ յիշւած հասոյթները ինչպէս նաեւ անոնք, որոնք կը գոյանան որոշ նպատակի մը համար տրւած ներկայացումէ, վիճակախազէ եւայն, կը գործածւին Ազգ. Միութեան կեդր. Վարչութեան ձեռամբ իրենց որոշւած նպատակներուն:

90.— Կեդր. Վարչութիւնը միաժամանակ կեդր. մարմինն է վերը յիշւած բարեգործական միութեանց:

91.— Հայբենակացական միութիւնները կրնան գործել անկախ, առկայն, երբ ու եւ է հանդէս, ներկայացում, վիճակահանութիւն եւ ընդհ. հանգանակութիւն ուղեն կատարել, պարտաւոր են Ազգ. Միութեան Տեղական Մարմիններու հաւանութիւնը ստանալ նախապէս:

Գլուխ թ Ժ.

ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԵՂԵԿ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒԻ

ՄԻԶԵԿ ՈՒ ԱՅՍ ՎԵՐՋԻԿԱՆՆԵՐՈՒԻ ԵՒ ՈՒԹԻՒ

Ա.Զ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ՄԻԶԵԿ

92.— Կեդր. Վարչութիւնը ընդհանուր Պուլկարահայութեան, խակ Տեղեկ. Մարմինները իրենց պատկանած շրջաններուն համար միակ իւրաւասու մարմիններն են գործադրելու ազգ. ընդհանուր ընոյթ ունեցող բոլոր խնդիրներու մասին Պատգմ. Ժողովին տւած որոշումները:

93.— Թաղի. Խորհուրդները եւ ազգ. Վարժարաններու Հոգարարձութիւնները կը գործեն անկախ Ազգ. Միութեան մարմիններէն միայն ճշգրիտ կերպով իրենց համար նախատեսւած իրաւասութեանց սահմաններուն մէջ:

21904-59




94.— Խւրաքանչիւր Տեղկ. Մարմին կը ներկայացնէ միմիայն իր շրջանը եւ չի կրնար որոշումներ տալ իր այս իրաւասութենէն դուրս, ոչ ալ ներկայացնել իր շրջանէն դուրս եղող շրջանները:

95.— Ներկայ կանոնադիրը գործադրութեան կը մանէ շրջաններուն հազորդւելէն անմիջապէս յետոյ:

96.— Աղջ. Միութեան եւ կեդր. Վարչութեան լուծւելէն վերջ՝ անոր գոյքերը եւ դրամները կը յանձնին Հայկական Հանրապետութեան:





2P

8M

ՀՀ Ազգային գրադարան



NL0211234

42. 421

